2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը [1]

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 155.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 131.7 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 70%-ով և 58.6%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին եռամսյակի ծրագրի կատարումը: Հարկ է նշել, որ ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում հունվար-փետրվար ամիսներին պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Մասնավորապես՝ արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 3.4 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում նախատեսված մուտքերի 76.9%-ը, իսկ ծախսերը՝ 1.6 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 36.1%-ը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 15.1%-ով, ծախսերի գծով՝ 13%-ով:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 30.5%-ով կամ 36.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում ապահովվել է հարկային եկամուտների աճի հաշվին:

Պետական բյուջեի եկամուտների 94.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 4.9%-ը՝ այլ եկամուտների, 0.3%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին:

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 147.6 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 69.8%-ը: 2012 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 30.5%-ով կամ 34.5 մլրդ դրամով, ինչը մեծ մասամբ պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և մաքսատուրքի գծով մուտքերի աճով: Բացի այդ, 2013 թվականից հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությամբ նախկինում սահմանված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների փոխարեն ներդրվել է մեկ միասնական՝ եկամտային հարկ, որի գծով անցած երկու ամիսների ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 24.1 մլրդ դրամ: Նշված մուտքերը՝ հաշվետու ժամանակահատվածում մուտքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հետ միասին (որոնք մուտքագրվել են նախորդ տարվա պարտավորությունների գծով) 20.9%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մուտքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մուտքերը: 2013 թվականից ներդրվել է ևս մեկ նոր հարկատեսակ՝ շրջանառության հարկը, որի գծով հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 991.4 մլն դրամ:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 45.3%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է շուրջ 66.8 մլրդ դրամ և 47.3%-ով կամ 21.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը, ինչն ապահովվել է և՛ ներքին շրջանառությունից, և՛ ներմուծումից ստացված եկամուտների հաշվին:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.2%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 7.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 3.9 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 3.8 մլրդ դրամ: Ընդ որում, տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 13.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ծխախոտի և օղու գծով մուտքերի նվազմամբ, իսկ ներմուծվող ապրանքների գծով մուտքերը՝ ավելացել 26.8%-ով. արդյունքում ակցիզային հարկի ընդհանուր մուտքերն աճել են 3.2%-ով կամ 241.3 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 8.5%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 12.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա հունվարի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 0.6%-ով կամ 73.1 մլն դրամով:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա պարտավորությունների գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 6.3 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 4.3%-ը:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 7.6 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 5.2%-ը և 2.2 անգամ գերազանցել 2012 թվականի համապատասխան ցուցանիշը:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 3.5 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 65.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 10.2%-ով կամ 326.5 մլն դրամով:

Հաշվետու տարում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 1.8 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 1.2%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ նվազել է 44.8%-ով:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 4.4 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ՝ կազմելով հարկերի և տուրքերի 3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 53.7%-ով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 2 մլրդ դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.3%-ը: Մասնավորապես՝ 971.8 մլն դրամ են կազմել արտոնագրային վճարները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 21.3 մլն դրամի դիմաց: 40 մլն դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 655.1 մլն դրամ՝ ճանապարհային վճարները,

29.1 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, շուրջ 37.9 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 130.8 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 4.2 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, և 120.2 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 16.3%-ով կամ 277.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտոնագրային և ճանապարհային վճարների աճով:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում նախորդ տարվա պարտավորությունների գծով ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 9.9 մլրդ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

Պետական հիմնարկների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում պետական բյուջե են մուտքագրվել 419.2 մլն դրամի դրամաշնորհներ՝ կազմելով եռամսյակային ծրագրային ցուցանիշի 83%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են ավելի քան 7.7 մլրդ դրամ՝ 103.5%-ով ապահովելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 2.9 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է 73.1%-ով: Առանց արտաբյուջետային միջոցների այլ եկամուտները 36.9%-ով գերազանցել են առաջին եռամսյակի ծրագիրը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը կազմել են 59.3 մլն դրամ, որոնք 2013 թվականի պետական բյուջեով չեն նախատեսվել:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը կազմել են 656.9 մլն դրամ՝ 217.3%-ով գերազանցելով եռամսյակային ծրագրային ցուցանիշը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 470.1 մլն դրամ

տոկոսավճար՝ 0.2%-ով գերազանցելով եռամսյակային ծրագրային ցուցանիշը և 11.4%-ով զիջելով 2012 թվականի նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 1.1 մլրդ դրամ է մուտքագրվել իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ կազմելով եռամսյակային ծրագրով կանխատեսված ցուցանիշի 229.4%-ը և 50.9%-ով կամ 376.6 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 5.4 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրով կանխատեսված ցուցանիշի 134.4%-ը (իսկ առանց արտաբյուջետային միջոցների՝ 309%-ը)՝ 40.1%-ով կամ 1.5 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների համեմատ այլ եկամուտներն աճել են 27.7%-ով կամ շուրջ 1.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատճամիջոցներից մուտքերի աճով:

<u>ՀՀ պետական բյուջեի ծախսերը</u>

2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 14.1%-ով կամ 16.2 մլրդ դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել և՛ ընթացիկ ծախսերի, և՛ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 128.2 մլրդ դրամ՝ 59.4%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 13.7%-ով կամ 15.4 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերից 11.9 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը կազմել է եռամսյակային ծրագրի 54.9%-ը և 20.5%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեից օգտագործվել է 23.1 մլրդ դրամ, որը կազմել է եռամսյակային ծրագրի 51.1%-ը և 31.7%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված նյութերի վրա կատարված ծախսերի աճով:

Պետական պարտքի սպասարկմանը հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 7.5 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 72.6%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 5.8 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 1.7 մլդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 18.4%-ով կամ 1.2 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ պայմանավորված և՛ ներքին, և՛ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 5.4 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 23.5%-ը և 45.7%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են 14.9 մլրդ դրամ, որից շուրջ 14.6 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 324.8 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 6 մլրդ դրամ դոտացիաներ, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 11.6%-ով: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 62.2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 22.4%-ով կամ 2.7 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերի 35.9%-ը՝ 46 մլրդ դրամ, ուղղվել է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը՝ ապահովելով ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով եռամսյակային ծրագրի 62% կատարողական: Մասնավորապես՝ 32.8 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 13.2 մլրդ դրամ՝ նպաստները: Նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ նպաստների և կենսաթոշակների ծախսերն ավելացել են 4%-ով կամ 1.8 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 19.3 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով եռամսյակային ծրագրի 59%-ը և 2.5%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին կազմել են շուրջ 3.6 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 38.6%-ը: Մասնավորապես՝ 4 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է 41.4%-ով: 425.4 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն արձանագրել է 28.8% կամ 796.2 մլն դրամ աճ՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների վրա կատարված ծախսերի աճով:

<u>ՀՀ պետական բյուջեի հավելուրդը</u>

2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 24.0 մլրդ դրամ հավելուրդով՝ առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված 2.4 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Մասնավորապես՝ ներքին ֆինանսավորումը կազմել է -15.2 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ -8.8 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում բյուջետային ելքերի համեմատ մուտքերի առավել բարձր կատարողականի արդյունքում պակասուրդի ներքին աղբյուրներում ձևավորված ազատ միջոցներն ավելացել են 17.7 մլրդ դրամով՝ առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված 30.2 մլրդ դրամ օգտագործման փոխարեն:

Ներքին աղբյուրներում 4.8 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները, որոնք ստացվել են գանձապետական պարտատոմսերից, -20.0 մլրդ դրամ՝ ֆինանսական զուտ ակտիվները: 41.0 մլն դրամ է մուտքագրվել բաժնետոմսերում և կապիտալում այլ մասնակցության իրացումից, որը բյուջեով նախատեսված չէ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 3.0 մլրդ դրամի վարկեր: Ավելի քան 752.4 մլն դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -8.8 մլրդ դրամ: Արտաքին աղբյուրներում -1.9 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները: Հունվար-փետրվար ամիսների ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 5.5 մլն դրամի վարկային միջոցներ: Շուրջ 1.9 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 714.2 մլն դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 135.2 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 235.2 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 650.9 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 159.5 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը: -6.9 մլրդ դրամ են կազմել ֆինանսական զուտ ակտիվները, որից 6.6 մլրդ դրամը հատկացվել է ԼՂՀ-ին՝ որպես միջպետական վարկ: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով առաջին եռամսյակում նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է՝ կազմելով 92.8 մլն դրամ: 401.5 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: